ԳՈՒՅԵ — ՀՈՒՇ Է ՄԻԱՅՆ

Հրապարակված է՝ ՄԱՐԱՏ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ, civilnet.am, շոռեֆշաբթի, 3 ապրիլ, 2013

Աբսուրդը ձգտում է կատարելության։ Չնայած ասում են՝ աբսուրդը միշտ էլ կատարյալ է լինում։ Չեմ բացառում, բայց հազիվ թե սա մեր դեպքն է։ Միշտ էլ կգտնվի մեկը, որը աբսուրդում նոր նրբերանգներ կբացահայտի։ Անընդհատ, անդադար, անընդմեջ։ Ու չգիտես ինչու թվում է, թե անցյալում աբսուրդային չեն եղել Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտները։ Հազիվ թե։

Ու երևի թե հենց աբսուրդն էլ կենսունակ է։ Այսօր կանք, չէ՞։ Մյուսները չկան, շատերը չկան, բայց մենք կանք։ Ոչինչ, որ մի քիչ ջարդված, կոտորված, այսկողմ-այնկողմ ծվարած, միշտ ինչ-որ բանից զգուշացող, երբեմն հոխորտացող, անթիվ անհամար բարոյական հաղթանակներով, բայց կանք։ Ասում են՝ կլինենք։ Կարելի է վիճել, բայց թե մի բան կլինի, այսպես չի մնա։

Թվում է՝ խնդիրը հենց այնպես լինելը, մնալը չէ, նպատակով գոյությունն է։ Բայց թե ինչ նպատակ։ Կյանք է, ապրում ենք։ Ահա միակ նպատակը։ Մյուսներն անցողիկ են։ Հիմա ապրել ենք։ Էլի կապրենք։ Ահա միակը, ինչով այսօր են բացվում Արարատյան լուսապայծառ առավոտները։

Նման առավոտներից երբեմն փախչում են։ Մի բարի առավոտով բոլորը վեր են կենում ու որոշում են Միջերկրականի ափամերձ հատվածում ուրիշ առավոտներ փնտրել։ Մի անգամ արդեն փնտրել են։

Մյուսների միտքն է փախչում։ Ապաստանում ինքն իր մեջ, ապրում իրենով։ Մինչև մտքի թելը չկտրվի։ Ու եթե հանկարծ հաջողվում է խուսափել թելը կտրվելուց, ու Միջերկրականի ափերն էլ հեռու են՝ «Երկիր Նաիրի» է գրում։

Չհասկացա ինչի մասին էր (ստուգարք էր, պետք էր հանձնել)։ Հետո Հրանտ Մաթևոսյանն էր ասում՝ եթե առավոտները հասկանալ ես ուզում, «Երկիր Նաիրի» պիտի կարդալ (իհարկե այդպես չէր ասում, բայց)։ Հիմա էլ համոզված չեմ, որ հասկացել եմ՝ ինչ նկատի ուներ Հրանտը, ինչ նկատի ուներ Չարենցը։

Երկիր էր, իրական, ապրում էր իր համար, սոխերով, Համոն մտքում ինչ-որ բան էր մտմտում։ Բայց ապրում էին (Երկիրն ու Համոն, ու Համոյի միտքն էլ երևի պակաս աբսուրդ չէր)։ Հետո չգիտես ինչու, ինչ-որ հեռավոր մի տեղում, ինչ-որ մի բան է պատահում։ Երկիրն իր աբսուրդի մեջ շարունակում է տապակվել։ Ինչ-որ բանը շատ հեռու էր թվում։ Երկիրը ապահով կղզյակ էր թվում։ Հետո Համոյենք ոչ միայն մտքում էին մտմտում։ Հետո բոլորը փախչում էին։ Երկիրն էլ կարևոր չէր։ Ապրել էր պետք՝ կյանք է, պիտի ապրվեր։ Համոն էլ չկար, հետո եկավ, բայց արդեն ուշ էր, հետո Համոն էլ չկար։ Ու էլի արարատյան առավոտներ, հնուց, շատ հնուց եկած առավոտներ, որոնք չես էլ հասկանում՝ ինչ են կանխագուշակում։ Բացի այդ էլ՝ կուզիկի (թող ներվի՝ աբսուրդի) մեջքը գերեզմանը միայն կշտակի, չնայած «Գերեզմանից հետո — էլ ի՞նչ շտկում... հասկացողը կհասկանա»։

Ասում էի, չէ, դժվար է հասկանալ, եթե հասկանալ հնարավոր է ընդհանրապես Նաիրին։ Այն ճոճք էր թվում, մտքում, իրական, բայց ճոճք։ Ապահով էլ էր։ Սոխերն էին, ոչ սոխերը, բայց ապահով էր։ Ու վերջում, հո՛պ. «Գուցե սուտ է Նաիրին, Նաիրին — չկա... Գուցե — հուշ է միայն,— ֆիկցիա, միֆ։— Ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն...»։

Դե արի ու բան հասկացիր, դե արի ու բան հասկացրու, դե արի ու ապրիր... Ջնայած կյանք է, ապրում ենք էլի...